ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՏՆՕՐԵՆ՝

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան
h1 միջն. դպրոց , 8-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Ն. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

դասղեկի ազգանունը, անունը

2022 - 2023 ուսումնական տարի

Արտաքին վարչ 5
30.08.22թ.
Տրվել է Ֆ. Մելքումյան

ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) - Դասարանը բաղկացած է 32 աշակերտից՝ 20 տղա, 12 աղջիկ: Աշակերտներից երկուսը ունեն գերազանց առաջադիմություն: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Աշակերտները պատրաստակամ են, նախաձեռնող, ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ակտիվ մասնակցել են համադպրոցական բոլոր միջոցառումներին:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում –

Ուսումնադաստիարակչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով պետք է հետևել աշակերտների վարքին և ուսման առաջադիմությանը: Երեխաների աշխատասիրությունն ու նպատակասլացությունը բարձրացնելու համար ոգևորիչ մրցույթներ կազմակերպել՝ դասարանում ստեղծելով առողջ մրցակցություն: Հրավիրել ծնողական ծողովներ, հետևել աշակերտների անձնական հիգիենային և կարգապահությանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-

3.1 Հոգևոր դաստիարակություն- Այս նպատակով քննարկել ամռանը կազմակերպված էքսկուրսիայի տպավորությունները՝ արժևորելով մեր պատմական և մշակութային կենտրոնները, կազմակերպել նոր էքսկուրսիա դեպի նոր հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեական արժեքների նկատմամբ:

*3.2 Գեղագիտական դաստիարակություն- Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ, **ինչպես նաև վերաբերմունքը մարդու և հասարակության կենսագործունեության նկատմամբ:** :*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն- Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Կազմակերպել հանդիպումներ «Զարկ » ակումբի մարզիչների հետ Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն

բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն - <<Առողջ մարմնում, առողջ հոգի>> կարգախոսով բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Ոգևորել նրանց մասնակցությունը մարզական խմբակներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն- Մեփական փորձով և ծնողների օրինակով տեսանելի դարձնել աշխատանքի արդյունքում ստեղծված հանրօգուտ հետևանքը:

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն – Փժնորել ով <<մարդ-հասարակություն-բնություն>> փոխազդեցության պահանջները՝ պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում , ինչպես նաև զրուցել գլոբալ բնապահպանական խնդիրի մասին:

4. Դպրոց-ընտանիք կապը - Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը, իսկ երեխաներն իրենք են ներկայացնում իրենց ընտանիքը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ	*Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն*	*Նպատակը*	*Կատարման ժամկետը*	*Կատարողներ*	*Արդյունքը*
1	Կազմակերպական հարցեր (դասարանի ղեկավարի ընտրություն, դասագրքերի բաշխում)	Երեխաները կվերլուծեն և նախորդ տարվա աշխատանքները և նոր ավագի ընտրություն կկատարեն:		աշակերտ դասղեկ	
2	Մաքրությունն՝ առողջության երաշխիք (զրույց հիգիենային կանոնների մասին)	Կկարողանա ճիշտ օգտվել հիգիենայի միջոցներից և պահպանել մաքրություն դասարանում և դպրոցում:		աշակերտ դասղեկ	
3	Անկախության անգնահատելի դերն	Երեխան կարժևորի և կգնահատի անկախութ-		աշակերտ դասղեկ	

	ինձ համար:	յան դերը մեր կյանքում			
4	Աշակերտների իրավունքները և պարտականություններ ը դպրոցում	նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները		աշակերտ դասղեկ	
5	Պատերազմով խաթարված պատանեկություն	Կկարողանա արտահայտել սեփական տեսակետը քաղաքակիրթ աշխարհում պատերազմ-ների բերած անդառնալի արհավիրքների մասին և աշխարհի արձագանքի մասին:		աշակերտ դասղեկ	
6	Նրա մասին, ով ամեն օր իմ կողքին է	Կփորձի ճիշտ մոտեցում ցուցաբերել և անկեղծորեն կնկարագրի իր ընկերներին, կպատասխանի ընկերների հարցերին:		աշակերտ դասղեկ	
7	Լավ մարդիկ ավելի շատ են, քան ...	Փոխադարձ վստահության ձևավորում, ինքնաճանաչում Մտորումներ <<թշնամի>> և <<բարեկամ>>հասկացությունների շուրջ		աշակերտ դասղեկ	
8	Հայտնի և անհայտ մարդկանց հետաքրքրություններ ը:	Վեր հանել հասարակական կարծիքներ , քննարկել և բացահայտել մեր հետաքրքրությունները		աշակերտ դասղեկ	
9	Լավ և վատ սովորություններ	Կկարողանա ներկայացնել իր ամենալավ և ամենավատ սովորությունները, կառաջարկի ընկերներին շտկման քայլեր:		աշակերտ դասղեկ	
10	Բանականության սիմֆոնիա	Կպատրաստեն պաստառ (պատ) մեծ մարդկանց իմաստուն խոսքերով, կվերլուծեն, ասելիքը կբացատրեն		աշակերտ դասղեկ	
11	Ինչպես սովորել միայն լավ գործեր	Կփորձի նկարագրել այն ամենն, ինչն օգտակար է		աշակերտ դասղեկ	

	անել:	շրջապատի կամ մեկի համար:			
12	Իմ երկիրն երեկ, այսօր, վաղը	Կգնահատի մեր երկրի պատմական անցյալը և ներկայիս հերոսների արարքները: Հայրենասիրական դաստիարակություն		աշակերտ դասղեկ	
13	Իմ սիրած երգերը	Կարժևորի և կգնահատի հայկական և այլ մշակու-թային արժեքները		աշակերտ դասղեկ	
14	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	Կարժևավորվի աշխա-տանքում ուրախություն գտնելու գաղափարը		աշակերտ դասղեկ	
15	Վատ սովորություն-ների հետևանքները	Կմեկնաբանի , կբացահայտի իր և ընկերների լավ և վատ կողմերը		աշակերտ դասղեկ	
16	Ամանոր և Սուրբ ծնունդ	Կկարողան հարազատներին և ընկերներին գնահատել և ջերմ խոսքեր ու բարեմաղթանքներ ասել		աշակերտ դասղեկ	
17	Ինչպես հասկանալ մարդկանց	Կկարողանան հարգել մարդկանց տարբեր կարծիքները		աշակերտ դասղեկ	
18	Իմ հետաքրքրությունների ն ու նախասիրությունները	Կփորձի բացահայտել իրեն հետաքրքրող երևույթներն ու նախասիրությունները		աշակերտ դասղեկ	
19	Սիրո և հավատարմության մասին	Կգնահատի միմյանց սիրելու և անշահախնդրորեն նվիրվելու հարազատ , մտերիմ մարդկանց		աշակերտ դասղեկ	
20	Ժամանակի ճիշտ կառավարում	Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման, առաջնային և երկրորդային գործողությունների դասակարգման և իրականացման հմտությունների		աշակերտ դասղեկ	

		ձևավորում			
21	Ինչպես պահպանել Երկիր մոլորակը	Օգնել երեխաներին բնության հանդեպ հոգատար և պատասխանատու վերաբերմունք ձևավորել , ինչպես նաև էկոլոգիական խնդիրների հանդեպ		աշակերտ դասղեկ	
22	<<Կարող ես օգտակար լինել>>	Երեխաները կարժնորեն օգտակար լինելու հաճույքը: Ապրումակցում ձևավորել հատկապես խոցելի խմբերի համար		աշակերտ դասղեկ	
23	Ինչպե՞ս ապացուցել քո ճշմարտացիությունը	Սովորել խոսել միայն ճիշտ փաստերով, առողջ բանավիճել, ապացուցել սեփական ճշմարտացիությունը, ընդունել դիմացինի կարծիքը		աշակերտ դասղեկ	
24	Արդարացի և անարդար արարքներ	Երեխաների մոտ զարգացնել մշտապես արդարացի լինելու գաղափարը:		աշակերտ դասղեկ	
25	<<Եթե ես լինեի>>	Երեխաները կկարողանան իրենց զգալ իրենց երազած դերում, կկարողանան զարգացնել երևակայությունը		աշակերտ դասղեկ	
26	Ի՞նչ են պատմում ընտանեկան լուսանկարները	Կկարողանա պատմել հարազատների մասին լուսանկարներից և վեր հանել նրանց ժ/կային ներկայացումը:		աշակերտ դասղեկ	
27	<<Լռություն>>	Օգնել գիտակցել լռության կարևորությունը, տարբերի ասելիքը աղմուկից:		աշակերտ դասղեկ	
28	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը	Երեխաները վերանայում են իրենց փոխհարաբերությունները հարազատ մարդկանց և շրջապատի հետ		աշակերտ դասղեկ	
29	Անհատի բարեկրթությունը	Երեխաների մոտ դրական օրինակների վրա ձևավորել բարեկրթություն :		աշակերտ դասղեկ	
30	<<Համակարգիչ. ընկե՞ր, թե՞ թշնամի,	Հասկանալ, թե ինչ դեր ունեն ժամանակակից		աշակերտ դասղեկ	

	մեդիագրագիտության կարևորությունը	տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտի կյանքում, տարբերակել դրանց դրական և բացասական կողմերը			
31	Եթե ես կարողանայի	Սովորել խոսել իր երազանքների մասին, կարողանալ կատարել ինքնավերլուծություն և խոսել թերացումների մասին		աշակերտ դասղեկ	
32	Տիեզերքն ափի մեջ	Երեխաները ծանոթանում են հայ աստղագիտության նվաճումներին և ներկայացնում դրանք: Հայ մտքի արժևորում, հայրենասիրական դաստիարակություն		աշակերտ դասղեկ	
33	Ինչ գեղեցիկ է աշխարհը	Կվերլուծեն և կկարողանան գնահատել գեղեցիկը, գեղագիտական ճաշակի ձևավորում		աշակերտ դասղեկ	
34	Ուսումնական տարվա ամփոփում:	Երեխաները ամփոփում են ուսումնական տարին, նշում են անցնող ուսումնական տարվա ձեռքերումները:		աշակերտ դասղեկ	